ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ

CHESS
ACADEMY OF ARMENIA

Երևան 0050, Շևչենկո 34
Հեռ./ֆաքս՝ 37410 448476, էլ. փոստ՝ info@chessacademy.am

34 Shevchenko, 0050 Yerevan,
Tel/fax: 37410 448476, E-mail:info@chessacademy.am

<<19>> << փետրվարի>> 2021թ.

N – 21/26

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,**
**ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ**
**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**պարոն Ն.Հարությունյանին**

Հարգելի պարոն Հարությունյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի 2022-2024թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾԾ) հայտը և 2022 թվականի բյուջետային հայտը:

ՏՆՕՐԵՆ՝ Ս.ԼՊՈՒՏՅԱՆ

02560522
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ФОНД
FUND

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
RA MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
Մուտք N 10393-21
«19» 02 2021թ.

11007 Շախմատիստների պատրաստման ծառայություններ

Ծրագրի ընդհանուր նկարագիրը եւ զարգացման միտումները նախորդող միջնաժամկետ հատվածում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ հիմնադրամը հիմնադրվել է 2002 թվականի մարտի 1-ին: Անցած տարիների ընթացքում Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամը պատշաճ կերպով կարողացել է իրականացնել իր առջև դրված ծրագրային նպատակները և մեծ ներդրում ունի Հայաստանում շախմատի զարգացման գործընթացում:

Ակադեմիայի կողմից կազմակերպվել են մի շարք շախմատի միջազգային և ազգային մրցաշարեր և հավաքներ: Մրցաշարերից առավել աչքի ընկան Տիգրան Պետրոսյանի 75-ամյակին նվիրված Ղարաբաղ 2004 միջազգային հուշամրցաշարը և աշխարհում նախադեպը չունեցող Ինտերնետային թիմային միջազգային մրցաշարը, որի կազմակերպման արդյունքում միջազգային հանրությանը ներկայացվեց Հայաստանի շախմատային աշխարհը մի նոր, առավել բարենպաստ տեսանկյունից: Մրցաշարերի շարքը լրացրեցին Ղարաբաղ 2005 /17 և 11 կարգի/, ՄԱԿ-ի գավաթ մանկապատանեկան մրցաշարը/2005-2008/, Սևանա Լիճ /2005-2017/, արդեն ամենամյա դարձած մանկապատանեկան Ջերմուկ /2006-2020/, Ծաղկաձոր Օփեն /2017-2019/ միջազգային մրցաշարերը, ինչպես նաև Անդրանիկ Մարգարյանի հուշամրցաշարը /2011-2020/:

Հիմնադրամի ջանքերի շնորհիվ Եվրոպայի և աշխարհի պատանիների առաջնություններում (մինչև 10, 12, 14, 16 և 18 տարեկանների խմբերում), ակադեմիայի սաները բազմիցս դարձել են չեմպիոն, փոխչեմպիոն և բրոնզե մեդալակիր:

2010թ. Համաշխարհային մինչև 16 տարեկանների օլիմպիադայում Հայաստանի թիմը դարձավ չեմպիոն, որտեղ անդամներից 3-ը ակադեմիայի սաներն էին, իսկ 2011թ. գրավեց երրորդ տեղը: Միջազգային այլ մրցաշարերում ակադեմիայի սաները նվաճել են ավելի քան 50 մրցանակային տեղեր: Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի կողմից պատրաստվել է տասնչորս միջազգային գրոսմայստեր, երկու կանանց միջազգային գրոսմայստեր, ինը միջազգային վարպետ, չորս կանանց միջազգային վարպետ, երեք ՖԻԴԵ-ի մարզիչ և մեկ միջազգային կարգի մրցավար: Մի քանի սան արդեն լրացրել են գրոսմայստերի և միջազգային վարպետի առաջին, երկրորդ նորմերը: Անցած տարիների ընթացքում հիմնադրամը կազմակերպել է 1000 և ավելի տաղանդավոր սաների շախմատի անվճար ուսուցում քաղաք Երևանում և Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի քաղաքներում և խոշոր գյուղերում:

Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի հիմնական խնդիրն է ապահովել հանրապետությունում ձևավորված շախմատային ավանդույթների սերնդեսերունդ փոխանցումը և օգտագործել ազգի շախմատային ներուժն ի շահ մեր երկրի:

Նպատակը

Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադրամի հիմնական նպատակներն են.

1. հանրապետության ամբողջ տարածքում ապահովել տաղանդաշատ հայ երեխաների բացահայտման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի իրականացումը,

2.ստեղծել համապատասխան հնարավորություններ ապահովելու համար հանրապետությունում ձևավորված շախմատային ավանդույթների սերնդեսերունդ փոխանցումը,

3. կրթել տաղանդաշատ երեխաներին և պատրաստել բարձրակարգ շախմատիստներ,

4. սեմինարների միջոցով բարձրացնել մարզիչների որակավորումը,

5. օգտագործել ազգի շախմատային ներուժն ի շահ երկրի մասնավորապես.

- բարձրակարգ շախմատիստների սպորտային հաջողությունների արդյունքում բարձրացնել երկրի վարկանիշը, հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ,

- միջազգային մրցաշարերի կազմակերպման միջոցով ակտիվացնել արտասահմանյան տարբեր երկրների հետ մեր հանրապետության համագործակցությունը:

Նշված նպատակները սահմանված են Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադրամի կանոնադրությամբ:

Խնդիրները

Ըստ Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադրամի կանոնադրության ակադեմիայի հիմնական խնդիրներն են՝

- Նպաստել Հայաստանում շախմատի զարգացմանը ու ծավալմանը:
- Նպաստել շախմատային դպրոցների, ակումբների և խմբակների նյութատեխնիկական ապահովման ընդլայնմանը:
- Աջակցել շախմատային կյանքի լուսաբանմանը:
- Կազմակերպել միջազգային նմանատիպ կազմակերպությունների հետ գործունեություն համատեղ ծրագրերին մասնակցելու նպատակով:
- Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի 5-9 տարեկան սաների և 10-18 տարեկան ուժեղագույն շախմատիստների անվճար ուսուցում,
- Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի մարզերում գոյություն ունեցող 50 մասնաճյուղերի պահպանումը,
- Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի լավագույն սաների համար հավաքների կազմակերպում,
- Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի կողմից շախմատի մարզիչների համար հատուկ սեմինարների կազմակերպում՝ մասնագիտական ունակությունները զարգացնելու նպատակով,
- Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի կողմից միջազգային, ինչպես նաև հանրապետական մրցաշարերի կազմակերպումը:

Սահմանված խնդիրներին հնարավոր չէ տալ թվային արտահայտություն:

Ակնկալվող արդյունքները

Հաշվի առնելով Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի հիմնական գերակայություններն ու նպատակները և հիմնադրամի ֆինանսական միջոցների կրճատումը՝ 2022-2024 թվականների ողջ ժամանակահատվածում առաջնահերթությունը կտրվի շարունակական աշխատանքների հետևյալ ուղղություններին.

- Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի 5-9 տարեկան սաների և 10-20 տարեկան ուժեղագույն շախմատիստների անվճար ուսուցում,

- Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի մարզերում գոյություն ունեցող 43 մասնաճյուղերի պահպանում,

- Պատանի շնորհալի շախմատիստների բացահայտում, նրանց շախմատային որակների և գիտելիքների կատարելագործում

- Հայաստանի 10-20 տարեկան տաղանդաշատ շախմատիստների ուսումնամարզական հավաքների կազմակերպում (տարեկան մեկ հավաք),

- Մարզիչների որակավորումը բարձրացնելու նպատակով սեմինարների կազմակերպում

- Միջազգային և հանրապետական մրցաշարերի կազմակերպում

/Կից հավելված 1/

Վերջին երեք տարիներին զարգացման միտումները

Վերջին երեք տարիներին Հայաստանի շախմատի ակադեմիան իրականացրել է թվով 1000 երեխանների անվճար ուսուցում քաղաք Երևանում և մարզերում գոյություն ունեցող 50 հիմնադրամի մասնաճյուղերում, ինչպես նաև մրցաշարերի և հավաքների կազմակերպում և մարզիչների վերապատրաստում:

## Հավելված 1. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| Դասիչը | Ծրագիրը | Ծրագրի վերջնական արդյունքները | | |
|---|---|---|---|---|
| | | Չափորոշիչը | Ցուցանիշը | Ժամկետը |
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | | | | |
| 08.01.01 | Շախմատիստների պատրաստման ծառայություններ | Ակադեմիայում անվճար հիմունքներով ուսանող սաներ<br>• 5-9 տարեկան 1000 սաներ<br>• մինչև 18 տարեկան լավագույն շախմատիստներ | I, II, III և IV շախմատային կարգեր լրացրած սաներ | Հունվար-Դեկտեմբեր |
| | | | Միջազգային մրցաշարերում հաղթած և մրցանակային տեղեր զբաղեցրած սաներ | |
| | | Պատանի շնորհալի շախմատիստների բացահայտում, նրանց շախմատային որակների և գիտելիքների կատարելագործում | 1 բարձրակարգ շախմատիստի պատրաստում | Հունվար-Դեկտեմբեր |
| | | Մրցաշարերի կազմակերպում, հավաքների կազմակերպում | Միջազգային մրցաշարերի և հավաքների միջոցով շախմատիստների որակավորման բարձրացում | Հունվար-Դեկտեմբեր |
| | | Սեմինարների կազմակերպում | Սեմինարների միջոցով ՀՀ տարածքում դասավանդող մարզիչների որակավորման բարձրացում | Հունվար-Դեկտեմբեր |

| Միջոցառման դասիչը | Միջոցառման անվանումը | Արդյունքի չափորոշիչը | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **11007** | Շախմատիստների պատրաստման ծառայություններ | Ակադեմիայում անվճար հիմունքներով ուսանող սաներ /մարդ/ | 1000 | 935 | 935 | 935 | 935 |
| | | Բարձրակարգ շախմատիստների պատրաստում /մարդ/ | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| | | Միջազգային մրցաշարերի կազմակերպում /հատ/ | 2 | 2 | 3 | 3 | 3 |
| | | Ուսումնամարզական հավաքների կազմակերպում /հատ/ | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| | | Մարզիչների սեմինար-վերպատրաստում կազմակերպում /հատ/ | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| | | Միջազգային մրցաշարերում հաղթած և մրցանակային տեղեր զբաղեցրած սաներ /հատ/ | 8 | 8 | 8 | 8 | 8 |

# ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի կողմից
2022 թվականի ընթացքում ծրագրի իրականացման

1. Հիմնարկի անվանումը Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
2. Փոստային հասցեն Ծաչենկո 34
3. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման
Մարմնի անվանումը՝ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի Նախարարություն
4. Հիմնարկը սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումըՖԷՆ
գործառնական վարչություն
5. Հիմնարկի՝ գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ 1
(ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2)

7. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման
Բաժին N 08
Խումբ N 01
Դաս N 01
8.Ծրագրի անվանումը՝ Շախմատիստների պատրաստման ծառայություններ
9. Ծրագրի կոդը 1041
10. Միջոցառման կոդը 11007
11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման
12. Չափի միավորը՝ *հազար դրամ*

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները | NN | 2022թ.բյուջե ճշտված | 1եռ. | 1կիս | 9ամիս | Տարի |
|---|---|---|---|---|---|---|
| I. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ | x | 158438.5 | 31914.7 | 72098.6 | 112282.6 | 158438.5 |
| 1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ | x | 110575.0 | 18429.2 | 46072.9 | 73716.7 | 110575.0 |
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 411100 | 110575.0 | 18429.2 | 46072.9 | 73716.7 | 110575.0 |
| 2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ | x | 20832.7 | 6727.8 | 12510.3 | 18292.8 | 20832.7 |
| 2.1 Շարունակական ծախսեր, այդ թվում | x | 6743.7 | 2361.6 | 3371.8 | 5466.3 | 6743.7 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 421100 | 100.0 | 25.0 | 50.0 | 75.0 | 100.0 |
| Էներգետիկ ծառայություններ, այդ թվում | 421200 | 4840.0 | 1885.7 | 2420.0 | 4038.5 | 4840.0 |
| Էներգետիկ ծառայություններ | 421200 | 2671.5 | 801.5 | 1335.8 | 1870.1 | 2671.5 |
| Ջեռուցման ծառայություններ | 421200 | 2168.4 | 1084.2 | 1084.2 | 2168.4 | 2168.4 |
| Կոմունալ ծառայություններ, այդ թվում | 421300 | 673.3 | 168.3 | 336.7 | 505.0 | 673.3 |
| Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ | 421300 | 291.6 | 72.9 | 145.8 | 218.7 | 291.6 |
| Այլ կոմունալ ծառայություններ | 421300 | 381.7 | 95.4 | 190.9 | 286.3 | 381.7 |
| Կապի ծառայություններ | 421400 | 1130.4 | 282.6 | 565.2 | 847.8 | 1130.4 |
| 2.4.Մասնագիտական ծառայություններ, այդ թվում | x | 12921.3 | 4074.3 | 8554.6 | 11950.8 | 12921.3 |
| Մրցաշարերի, հավաքների և սեմինարների կազմակերպում | 424100 | 12921.3 | 4074.3 | 8554.6 | 11950.8 | 12921.3 |
| 2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում /ծառայություններ և նյութեր/ | x | 1047.7 | 261.9 | 523.9 | 785.8 | 1047.7 |
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 425200 | 1047.7 | 261.9 | 523.9 | 785.8 | 1047.7 |
| 2.6 Նյութեր /ապրանքներ/, այդ թվում | x | 120.0 | 30.0 | 60.0 | 90.0 | 120.0 |
| Գրասենյակային նյութեր և հագուստ, այդ թվում | 426100 | 120.0 | 30.0 | 60.0 | 90.0 | 120.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **գրասենյակային պիտույքներ** | **426100** | 120.0 | 30.0 | 60.0 | 90.0 | 120.0 |
| **7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ** | **x** | 27030.8 | 6757.7 | 13515.4 | 20273.1 | 27030.8 |
| Հարկեր, պարտադիր վճարներ, տույժեր, այդ թվում | **x** | 27030.8 | 6757.7 | 13515.4 | 20273.1 | 27030.8 |
| Գույքահարկ | **482100** | 624.4 | 156.1 | 312.2 | 468.3 | 624.4 |
| ՀՀ պետական բյուջեից հատկացված՝ ԱԱՀ-ի ծախսեր | **482200** | 26406.4 | 6601.6 | 13203.2 | 19804.8 | 26406.4 |

Կատարող՝ / անուն, ազգանուն, հեռախոս/

ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ CHESS ACADEMY OF ARMENIA FUND ФОНД ШАХМАТНАЯ АКАДЕМИЯ АРМЕНИИ 02560522 ՀԻՄՆԱԴՐԱՄ ФОНД FUND

# 2022թ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏ

| Հայտատուի անվանումը | |
|---|---|
| **Բաժին** | 08.ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ |
| **Խումբ** | 01.Հանգստի և սպորտի ծառայություններ |
| **Դաս** | 01.Հանգստի և սպորտի ծառայություններ |
| **Ծրագրի դասիչ** | |
| **Միջոցառման դասիչ** | |

**Մասնագետների պատրաստման ծառայություններ**

/ցանցային ցուցանիշներ/

| | միավոր | Ընդամենը | | | | | ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2020թ. փաստացի | 2021թ. հաստատված բյուջե | 2022թ. բյուջետային հայտ | 2023թ. բյուջետային հայտ | 2024թ. բյուջետային հայտ | 2020թ. փաստացի | 2021թ. հաստատված բյուջե | 2022թ. բյուջետային հայտ | 2023թ. բյուջետային հայտ | 2024թ. բյուջետային հայտ |
| Սյուն. 1 | Սյուն. 2 | Սյուն. 3 | Սյուն. 4 | Սյուն.5 | Սյուն. 6 | Սյուն. 7 | Սյուն.8 | Սյուն. 9 | Սյուն.10 | Սյուն.11 | Սյուն.12 |
| Կազմակերպությունների թիվը | կազմակերպություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Վարչական անձնակազմի հաստիքային միավորների թիվը | հաստիք | 13 | 12 | 12 | 12 | 12 | 13 | 12 | 12 | 12 | 12 |
| Վարչական անձնակազմի տարեկան աշխատավարձի ֆոնդը | հազ. դրամ | 20332.3 | 22754.9 | 22754.9 | 22754.9 | 22754.9 | 20332.3 | 22754.9 | 22754.9 | 22754.9 | 22754.9 |
| Վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը | դրամ | 130335 | 158020 | 158020 | 158020 | 158020 | 130335 | 158020 | 158020 | 158020 | 158020 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մասնագետների հաստիքային միավորների թիվը | հաստիք | 65 | 53 | 53 | 53 | 53 | 65 | 53 | 53 | 53 | 53 |
| Մասնագետների տարեկան աշխատավարձի ֆոնդը | հազ. դրամ | 83732.2 | 77879 | 77879 | 77879 | 77879 | 83732.2 | 77879 | 77879 | 77879 | 77879 |
| Մասնագետների միջին ամսական աշխատավարձը | դրամ | 107349 | 122451 | 122451 | 122451 | 122451 | 107349 | 122451 | 122451 | 122451 | 122451 |
| Սպասարկող անձնակազմի հաստիքային միավորների թիվը | հաստիք | 8 | 7 | 7 | 7 | 7 | 8 | 7 | 7 | 7 | 7 |
| Սպասարկող անձնակազմի տարեկան աշխատավարձի ֆոնդը | հազ. դրամ | 11382.8 | 9941.1 | 9941.1 | 9941.1 | 9941.1 | 11382.8 | 9941.1 | 9941.1 | 9941.1 | 9941.1 |
| Սպասարկող անձնակազմի միջին ամսական աշխատավարձը | դրամ | 118571 | 118346 | 118346 | 118346 | 118346 | 118571 | 118346 | 118346 | 118346 | 118346 |
| Ընդամենը հաստիքային միավորների թիվը | հաստիք | 86.0 | 72.0 | 72.0 | 72.0 | 72.0 | 86.0 | 72.0 | 72.0 | 72.0 | 72.0 |
| Սաների թիվը տարվա սկզբին | մարդ | 1000 | 935 | 935 | 935 | 935 | 1000 | 935 | 935 | 935 | 935 |
| Սաների թիվը տարվա վերջին | մարդ | 1000 | 935 | 935 | 935 | 935 | 1000 | 935 | 935 | 935 | 935 |

Կատարող՝ / անուն, ազգանուն, հեռախոս/

CHESS ACADEMY OF ARMENIA FUND
02560522